

ՇԱՔԱՐԱՅԻՆ ԴԻԱԲԵՏ ՈՒՆԵՑՈՂ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ և ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԳԼԻԿԵՄԻԱՅԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ և ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ԿԼԻՆԻԿԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

Ամփոփում

Նպատակ

Ուղեցույցը տրամադրում է դիաբետով երեխաների և դեռահասների շրջանում գլիկեմիայի գնահատման և շարունակական մոնիթորինգի արդի միջազգային գիտաբժշկական տեղեկատվության վրա հիմնված բուժական և կազմակերպչական գործառույթների համալիր: Փաստաթղթի նպատակն է բարելավել դիաբետով երեխաների և դեռահասների գլիկեմիայի վերահսկումը և կյանքի որակը:

Մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Մանկական և դեռահաս հասակի երեխաների դիաբետի միջազգային միության կողմից (International Society for Pediatric and Adolescent Diabetes, ISPAD) 2014թ. հրատարակված «Դիաբետով երեխաների և դեռահասների շրջանում գլիկեմիայի գնահատման և շարունակական մոնիթորինգի կլինիկական ուղեցույցը» (ISPAD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Assessment and monitoring of glycemic control in children and adolescents with diabetes), ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ամերիկայի դիաբետի միության (American Diabetes Association) կողմից Ցուցումների որոնման, ուսումնասիրման և գնահատման համակարգի (GRADE) ձևափոխված տարբերակ (տես՝ Հավելված 1.): Տեղայնացման/ ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից: Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, էնդոկրինոլոգների, մանկաբույժների, թերապևտների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ

ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Արդյունքներ

Հիմնվելով վերոնշյալ ապացուցողական մեթոդաբանության վրա ուղեցուցում լուսաբանվել են գլիկեմիայի վերահսկման նպատակները, գլիկեմիայի թիրախայի արժեքների հիմքում ընկած սկզբունքները, շարունակական մոնիտորինգի արդյունքում կուտակվող տեղեկատվության թվայնացումը և առկա գործիքները: Առանձնակի կարևորվել է հիպոգլիկեմիայի վերաբերյալ զգոնության ապահովման հիմնահարցը: Ընդհանուր առմամբ ձևակերպվել է 18 խորհուրդ, որոնցից 7-ի հիմքում ընկած են A որակի ապացույցներ:

Հեղևություններ

Միջազգային փորձագետների մեծաքանակ խումբ եկել է համաձայնության դիաբետով երեխաների և դեռահասների շրջանում գլիկեմիայի գնահատման և մոնիթորինգի բազմաթիվ կարևոր սկզբունքների վերաբերյալ: Չնայած այն փաստին, որ որոշ խորհուրդներ ունեն թույլ ապացուցողական ուժ, այնուամենայնիվ, այս մեթոդաբանությամբ մշակված տեղեկատվությունը՝ դա պացիենտների բուժման արդյունքների բարելավման հիմքն է:

Բանալի բառեր

Գլիկեմիայի գնահատում, գլյուկոզայի շարունակական մոնիտորինգ, գլիկոզիլացված հեմոգլոբին

Պատասխանատու համակարգող

Աղաջանովա Ե.Մ, բ.գ.դ., պրոֆեսոր, ԵՊԲՀ Էնդոկրինոլոգիայի ամբիոնի վարիչ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի Էնդոկրինոլոգիական կլինիկայի ղեկավար, ՀՀ ԱՆ գլխավոր մանկական Էնդոկրինոլոգ

Աշխատանքային խմբի անդամներ

- Լ.Գ. Քալանթարյան, ԵՊԲՀ Էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի Էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-Էնդոկրինոլոգ

- Գ.Մ.Բայբուրդյան- ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դասախոս, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Ռ.Լ.Մարկոսյան- բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Լ.Վ.Նավասարդյան-բ.գ.թ., ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի դոցենտ, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցի էնդոկրինոլոգիայի կլինիկայի բժիշկ-էնդոկրինոլոգ
- Ն.Հ. Զոհրաբյան- ԵՊԲՀ էնդոկրինոլոգիայի ամբիոնի ասիստենտ

Շահերի բախման հայտարարագիր և ֆինանսավորման աղբյուրներ

Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները շահերի բախում չեն նշում: Սույն փաստաթղթի մշակման աշխատանքները չեն ֆինանսավորվել:

Շնորհակալական խոսք

Պատասխանատու համակարգողը իր երախտագիտությունն է հայտնում աշխատանքային խմբի բոլոր անդամներին, ինչպես նաև սույն ուղեցույցի մշակման աշխատանքներին իրենց աջակցությունը, խորհրդատվությունը և մասնագիտական գիտելիքները տրամադրած գործընկերներին, հատկապես՝ ՀՀ ԿԳՆ Երևանի պետական համալսարանի Ֆարմացիայի ինստիտուտի կենսաբժշկության ամբիոնի վարիչ, ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտի «Ապացուցողական բժշկություն» դասընթացի ղեկավար, ՀՀ ԱՆ Հանրապետական գիտաբժշկական գրադարանի «Բժշկական սեղմագրերի հայկական հանդես»-ի գլխավոր խմբագիր, «Ապացուցողական բժշկության մասնագետների հայկական ասոցիացիա»-ի նախագահ՝ բ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Հովհաննեսյանին:

Ինչպես նաև էնդոկրինոլոգիայի ամբիոնի կլինիկական օրդինատոր Հասմիկ Զախարյանին աշխատանքային խմբին օգնելու համար:

Ուղեցույցը չի կարող փոխարինել բժշկի որոշումներ ընդունելու հմտություններին անհատ պացիենտի վարման դեպքում և տվյալ կլինիկական իրավիճակի պայմաններում:

Բովանդակություն

Նախաբան

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Ուղեցույցի առանցքային խորհուրդների ամփոփում

Գլխկեմիայի նպատակային ցուցանիշների որոշման հիմնական սկզբունքները

Արյան գլուկոզայի ինքնահսկում

Գլյուկոզայի շարունակական մոնիտորինգ

Կետոնային մարմինների որոշումը արյան մեջ և մեզում

Գլխկեմիայի գրառումների պահպանում

Գլխկոզիլացված հեմոգլոբին

Ֆրուկտոզամին ու այլ գլխկոլիզացված պրոդուկտներ

Ներդրման հնարավորություններ և աուդիտի ցուցանիշներ

Գրականության ցանկ

Հավելված 1. Ապացույցների դասակարգման համալիր

Հավելված 2. Գլխկեմիայի հսկողության նպատակային ցուցանիշներ

Հապավումներ

ԱԳԻՄ՝ արյան գլյուկոզայի ինքնահսկման մեթոդ

ԱՄ՝ ապացույցների մակարդակ

ԳՇՄ՝ գլյուկոզայի շարունակական մոնիտորինգ

ԿՆՀ՝ կենտրոնական նյարդային համակարգ

ԻՇԵԻ՝ ինսուլինի շարունակական ենթամաշկային ինֆուզիա

ՊԲՎՓ՝ պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկումներ

DCTT (The Diabetes Control and Complications Trial)՝ Դիաբետի Հսկողության և Բարդությունների Հետազոտություն

ISPAD (International Society for Pediatric and Adolescent Diabetes)՝ Երեխաների և դեռահասների դիաբետի միջազգային միություն

HbA1C՝ գլիկոզիլացված հեմոգլոբին

Նախաբան

Երեխաների (0-14 տարեկան) ընդհանուր քանակը 2007թ. կազմել էր 1.8 միլիարդ, որոնցից 0.02% ունեին դիաբետ: Սա ենթադրում է, որ 497.000 երեխա տառապում են դիաբետով և տարեկան գոյանում է շուրջ 79.000 նոր դեպք [1]: Երեխաների այս լայն զանգվածը վերապրելու և առանց բարդությունների կամ ստիգմաների որակյալ կյանք ունենալու նպատակով կարիք ունի ինսուլինի մշտական ներարկումների: Նույնիսկ մեր օրերին, ինսուլինի հայտնաբերումից շուրջ մեկ դար անց, համաշխարհային կտրվածքով դիաբետով երեխայի մահվան ամենա հաճախ պատճառն է՝ ինսուլինի անհասանելիությունը [2]: Ուստի միջազգային կազմակերպությունների բոլոր ջանքերը պետք է ուղղված լինեն շտկելու այս դրամատիկ իրավիճակը և կանխարգելելու երեխաների մահը դիաբետից: Մանկական և դեռահաս հասակի երեխաների դիաբետի միջազգային միության (International Society for Pediatric and Adolescent Diabetes, ISPAD) ուղեցույցերը լույս տեսան առաջին անգամ 1995թ, հաջորդիվ՝ 2000 և 2009թթ. [3]: ISPAD-ի փաստաթղթերը թարգմանվեցին աշխարհի ավելի քան 11 լեզուների և միառժամանակ լրամշակվեցին ազգային ուղեցույցերի տվյալներով ինչը վկայում է խնդրի արդիականության և գլոբալ քայլերի անհրաժեշտության մասին [4, 5]: Այս կազմակերպությունը խրախուսում է ուղեցույցի թարգմանությունները և տեղայնացումները աշխարհի բոլոր երկրներում գնահատելով տեղային կլինիկական փորձի, սոցիալական, մշակութային և առողջապահական ռեսուրսների պայմանների կարևորությունը: Դիաբետով երեխայի կամ դեռահասի, ընտանիքի

անդամների և բուժսպասարկում իրականացնող անձանց կրթությունը՝ սույն 2014թ կլինիկական ուղեցույցի հիմնաքարային ուղերցն է: Ըստ ISPAD-ի տեսլականի ուղեցույցը պետք է նպաստի.

- ոչ պատշաճ վերահսկվող դիաբետի երկարաժամկետ լուրջ հետևանքների վերաբերյալ կառավարությունների, առողջապահական մարմինների և բնակչության շրջանում իրազեկության և զգոնության մակարդակների բարձրացմանը ինպես նաև դիաբետի օպտիմալ վարման համապատասխան միջոցների պլանավորման և տրամադրման անհրաժեշտության գիտակցմանը
- անհատ բուժաշխատողների կողմից արդի գիտագործնական տվյալների վրա հիմնված ավելի օպերատիվ, ապահով, շարունակական և ստանդարտացված բուժօգնության և վերահսկման ցուցաբերմանը
- դիաբետով երեխաների և դեռահասների բուժման արդյունքների բարելավմանը ուղղված ապացուցողական բնույթի խորհուրդների մշակմանը

Տեղեկատվության որոնման և գնահատման մեթոդաբանություն

Սույն ուղեցույցը մշակվել է Մանկական Էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի անդամների կողմից: Տեղեկատվության հավաքագրման մարտավարությունը ընդգրկել է բանալի բառերի օգնությամբ իրականացվող բազմաբնագավառ որոնում MEDLINE, PubMed, Cochrane library, National Guideline Clearinghouse և UpToDate շտեմարաններում: Որոնման ժամանակային շրջանակն է՝ 2000 – 2017թթ.: Փաստաթղթերի նկատմամբ կիրառվել են հետևյալ տեսակավորման ցուցանիշները՝ ապացուցողական բնույթ (համակարգված ամփոփ տեսություն, պատահական բաշխմամբ վերահսկվող փորձարկում, ցանկացած խոհուրդի վերաբերյալ հստակ հղումների առկայություն, ապացույցների ուժի և որակի գնահատականներ և այլ), ազգային կամ համաշխարհային ամփոփումների կարգավիճակ, անգլերեն լեզու: Փաստաթղթի հիմքն են հանդիսացել Մանկական և դեռահաս հասակի երեխաների դիաբետի միջազգային միության կողմից (International Society for Pediatric and Adolescent Diabetes, ISPAD) 2014թ.

հրատարակված «Դիաբետով երեխաների և դեռահասների շրջանում գլիկեմիայի գնահատման և շարունակական մոնիթորինգի կլինիկական ուղեցույցը» (ISPAD Clinical Practice Consensus Guidelines 2014 Compendium, Assessment and monitoring of glycemc control in children and adolescents with diabetes) [6], ինչպես նաև Cochrane library և UpToDate էլեկտրոնային շտեմարանների տվյալները: Տեղեկատվության որակը գնահատելիս և ցուցումների ուժը որոշելիս հիմք է ընդունվել Ամերիկայի դիաբետի միության (American Diabetes Association) կողմից Ցուցումների որոնման, ուսումնասիրման և գնահատման համակարգի (GRADE) ձևափոխված տարբերակը (տես՝ Հավելված 1.): Ապացույցների մակարդակները (ԱՄ)՝ (A, B, C, E) ներկայացված են յուրաքանչյուր խորհուրդից հետո: Հատկանշական է, որ ԱՄ-ը շնորհված են նույնիսկ ուղեցույցի նպատակներին: Տեղայնացման/ադապտացիայի աշխատանքները կատարվել են ADAPTE մեթոդաբանության հիման վրա: Պատասխանատու համակարգողը և աշխատանքային խմբի անդամները հայտարարագրել են իրենց շահերի բախման վերաբերյալ տեղեկատվությունը: Ուղեցույցի բոլոր դրույթները քննարկվել և հավանության են արժանացել Մանկական էնդոկրինոլոգների Հայկական Ասոցիացիայի կողմից: Ուղեցույցը նախատեսված է մանկական էնդոկրինոլոգների, էնդոկրինոլոգների, մանկաբույժների, թերապևտների, ինչպես նաև առողջապահության կազմակերպիչների համար: Փաստաթուղթը ենթակա է պարբերական թարմացումների և/կամ խմբագրման յուրաքանչյուր 5 տարին մեկ կամ ավելի հաճախակի՝ կախված տվյալ ոլորտում նոր գիտագործնական տեղեկատվության ի հայտ գալուց:

Ուղեցույցի նպատակների և առանցքային խորհուրդների ամփոփում

Նպատակներ

Գլիկեմիայի մոնիտորինգը ներառում է գլյուկոզայի ամենօրյա մոնիտորինգ տնային պայմաններում, ինչպես նաև պարբերաբար ընդհանուր գլիկեմիայի մոնիտորինգ: Գլիկեմիայի մոնիտորինգի նպատակներն են.

- Ճշգրտությամբ և զգուշությամբ գնահատել յուրաքանչյուր անհատի կողմից ձեռք բերված գլխկեմիկ կոնտրոլի մակարդակը այնպես, որ գլխկեմիկ թիրախին հասնելը լինի ի օգուտ պացիենտի [7,9] (ԱՄ՝ A):
- Օգնել պակասեցնել հիպոգլխկեմիայի, դիաբետիկ կետոացիդոզի(ԴԿ) ռիսկը և միկրովասկուլյար, մակրովասկուլյար հիվանդությունների խրոնիկ բարդությունները (ԱՄ՝ A):
- Նվազագույնի հասցնել հիպոգլխկեմիայի(A) և հիպերգլխկեմիայի(ԱՄ՝ B/C) ազդեցությունը կոգնիտիվ ֆունկցիայի և տրամադրության վրա [9]:

Խորհուրդներ

- Արյան գլյուկոզայի ինքնահսկումը (ԱԳԻ) պարտադիր պայման է երեխաների ու դեռահասների դիաբետի օպտիմալ կառավարման համար: Եվ եթե ֆինանսապես հնարավոր է, այն պետք է հասանելի դարձնել բոլոր դիաբետ ունեցող երեխաների համար (ԱՄ՝ A):
- Արյան գլյուկոզայի ինքնահսկումը (ԱԳԻ) պետք է նշանակվի որոշակի հաճախականությամբ՝ օպտիմալացնելու համար յուրաքանչյուր երեխայի դիաբետի հսկողությունը: Սովորաբար օրը 4-6 անգամ, քանի որ արյան գլյուկոզայի ինքնահսկման հաճախությունը կորելացվում է գլխկեմիկ կոնտրոլի հետ (ԱՄ՝ B/C):
- Արյան գլյուկոզայի մոնիտորինգը թանկարժեք հետազոտություն է, ինչը կարող է սահմանափակել այս մեթոդի հասանելիությունը: Ինչևէ, բոլոր կենտրոնները, որոնք զբաղվում են մանկական դիաբետով, պետք է քաջալերեն բնակչությանը, պետական մարմիններին ու առողջապահական կազմակերպություններին ապահովել դիաբետով երեխաներին ու դեռահասներին արյան գլյուկոզայի մոնիտորինգի համար անհրաժեշտ պարագաներով (ԱՄ՝ E):
- Պետք է հաշվի առնել, որ առանց ճշգրիտ մոնիտորինգի նշանակալի մեծանում է սուր կրիզների, ուշ վասկուլյար ու այլ վնասող բարդությունների

ռիսկը, որը բերում է առողջապահական մեծ ծախսերի ու հաշմանդամության(ԱՄ՝ A):

- Գլյուկոզայի շարունակական մոնիտորինգի սարքավորումները դառնում են հասանելի, որոնք կարող են մասնավորապես օգտակար լինել այն անձանց համար, ովքեր ունեն հիպոգլիկեմիայի անզգայունություն: Այս սարքը ազդանշան է տալիս, երբ գլյուկոզայի ցուցանիշները իջնում են նշված մակարդակից, կամ երբ իջնում են շատ արագ(ԱՄ՝ A):
- Կետոնների որոշումը պետք է լինի հասանելի և իրականացվի (ԱՄ՝ A).
- Հիվանդության ժամանակ, հատկապես երբ կա որովայնացավ, փսխումներ, քնկոտություն կամ հաճախաշնչություն
- Երբ գլյուկոզայի մակարդակը շարունակաբար բարձր է 14մմոլ/լ:
 - Արյան գլյուկոզայի մոնիտորինգի տվյալները չպետք է օգտագործվեն որպես քննադատություն, այլ լինեն միջոց պարզելու տատանումների պատճառները և գտնել ստրատեգիաներ գլիկեմիկ կոնտրոլի բարելավման համար (ԱՄ՝ E):
 - Տնային պայմաններում գլյուկոզայի հաճախակի չափումները, տվյալների և տատանումների գրանցումը և դրանց հիման վրա արված փոփոխությունները պարտադիր պայման են դիաբետի հաջողված ինտենսիվ կառավարման համար (ԱՄ՝ E):
 - Որոշ դեպքերում հատկապես դեռահասների շրջանում, դժվար է իրականացնել տվյալների ստաբիլ գրառում: Եթե ընտանիքի անդամները կարող են ներբեռնել մոնիտորինգի տվյալները համակարգչի մեջ, սա կարող է փոխարինել վերը նշված տարբերակին: Այնուամենայնիվ Չնայած ամենօրյա կառավարման մանրամասները կարող են կորել այս մեթոդի կիրառման դեպքում (ԱՄ՝ E):
 - HbA1C-ի չափման համար միջոցները պետք է հասանելի լինեն բոլոր այն կենտրոններում, որտեղ զբաղվում են երեխաների և երիտասարդների դիաբետով (ԱՄ՝ B/C):
 - HbA1C-ի որոշման հաճախականությունը կախված է լոկալ ռեսուրսներից: Խորհուրդ է տրվում կատարել տարեկան առնվազն 4 որոշում(ԱՄ՝ B/C):

- բոլոր տարիքային խմբերում խորհուրդ է տրվում HbA1C-ի <7,5% նպատակային մակարդակը (ԱՄ՝ B)
- Բոլոր տարիքային խմբերում նպատակային ցուցանիշները պետք է ապահովեն նվազագույն քանակությամբ ծանր հիպոգլիկեմիաներ և բացառեն հիպոգլիկեմիայի անզգայունությունը (ԱՄ՝ B):
- Հիպոգլիկեմիայի անզգայունության դեպքում գլիկեմիայի նպատակային ցուցանիշները անհրաժեշտ է բարձրացնել մինչև հիպոգլիկեմիայի զգայունությունը կվերականգնվի (ԱՄ՝ B):

Գլիկեմիայի նպատակային ցուցանիշների որոշման հիմնական սկզբունքները

Արյան գլյուկոզայի ինքնահսկման մեթոդը (ԱԳԻՄ) ամենա արդյունավետն է, քանզի տրամադրում է անհապաղ տեղեկատվություն հիպերգլիկեմիայի ու հիպոգլիկեմիայի մասին, ինչը թույլ է տալիս ընտրել գլյուկոզայի ոչ նպատակային ցուցանիշների օպտիմալ բուժման ճիշտ մարտավարություններ, ինչպես նաև կանխարգելման համար:

Գլյուկոզայի շարունակական մոնիտորինգը (ԳՇՄ), որը աստիճանաբար դառնում է ավելի հասանելի պացիենտների համար, ապահովում է ավելի արդի "իրական ժամանակում" ("real time") հսկողություն և կդառնա մոնիտորինգի ստանդարտ մոտ ապագայում:

HbA1C-ն գլիկեմիայի վերահսկման միակ ցուցանիշն է, որի արդյունքների վերաբերյալ կան վստահելի տվյալներ: Նորմայից բարձր HbA1C-ն կանխագուշակում է երկարաժամկետ միկրովասկուլյար ու մակրովասկուլյար բարդությունները [7,8]: Դիաբետի Հսկողության և Բարդությունների Հետազոտությունը The Diabetes Control and Complications Trial-ը (DCCT) և նմանատիպ հետազոտությունները ցույց են տվել, որ մեծահասակների ու դեռահասների շրջանում, լավ մետաբոլիկ հսկողությունը, HbA1C-ի ցածր ցուցանիշները՝ զուգակցված ինտենսիվ կառավարման հետ, նվազեցնում են միկրոանոթային բարդությունների հաճախականությունը և

հետաձգում դրանց զարգացումը [7, 8, 11-13]: DCCT-ում բուժման խմբում բարդությունների առաջացման ռիսկի վրա ազդեցության 96% բացատրվում է HbA1C-ի տատանումներով: Մյուս մեխանիզմները ինքնուրույն, կամ HbA1C-ի հետ փոխազդեցությունյան միջոցով կարող են գումարվել ինտենսիվ բուժման էֆեկտին [14]: Որպես գլիկեմիկ վերահսկման ցուցանիշ HbA1C-ն ունի սահմանափակում, ինչպիսին է արյան գլյուկոզայի միջին մակարդակը: DCCT-ում HbA1C-ի 7% մակարդակը համապատասխանում է (միջինում 7 անգամ չափման դեպքում) ստանդարտ բուժում ստացող հիվանդների ավելի բարձր գլյուկոզայի միջին ցուցանիշների (10,7մմոլ/լ) և ինտենսիվ բուժում ստացող հիվանդների դեպքում գլյուկոզայի ավելի ցածր միջին ցուցանիշների (9.1մմոլ/լ): HbA1C-ի և արյան գլյուկոզայի չափումների միջև նմանատիպ փոփոխականություն ներկայացված էր նաև մի աշխատությունում, որը հաշվարկում էր 3 ամիսների ընթացքում արյան գլյուկոզայի միջին ցուցանիշները գլյուկոզայի գրեթե շարունակական մոնիտորինգի պարագայում ելնելով սենսորի տվյալներից (≥ 4 օր/շաբ) [15]: Հետազոտության արդյունքում գրանցվել են գլյուկոզայի կոնցենտրացիայի անհատական զգալի տատանումներ 128-187մգ/դլ գլյուկոզայի միջին ցուցանիշի և HbA1C-ինը՝ 6,9-7,1% պայմաններում: Այս տվյալները առաջարկում են ավելի զգուշորեն օգտագործել ենթադրյալ արյան գլյուկոզայի միջին թիվը՝ ելնելով HbA1C-ի մակարդակից:

HbA1C-ն այն եզակի ցուցանիշներից է, որը թույլ է տալիս գնահատել և հասնել օպտիմալ գլիկեմիկ վերահսկման, փաստագրված հիպոգլիկեմիաների, բուժման տեսակի, տարիքի, կյանքի որակի հետ միասին: Օպտիմալ մետաբոլիկ հսկողության հասնելու և պահպանելու համար անհրաժեշտ է արյան գլյուկոզայի հաճախակի և ճշգրիտ մոնիտորինգ՝ ինսուլինի ու ածխաջրերի ընդունման օպտիմալ կորրեկցիայի, ֆիզիկական ակտիվության ուղեկցությամբ: Եվ վերջապես DCCT-ի արդյունքներին հետևելով եզրակացվել է, որ 5-7 տարի վատ գլիկեմիկ վերահսկողությունը, նույնիսկ դեռահասների, երիտասարդ մեծահասակների շրջանում, մեծացնում է միկրովասկուլյար ու մակրովասկուլյար բարդությունների ռիսկը մոտակա 6-10 տարիների ընթացքում [13, 16-19]: Այս տվյալները հիման վրա անհրաժեշտ է յուրաքանչյուր անձի համար հասնել HbA1C-ի հնարավորինս նորմալ մակարդակի:

Պատմականորեն HbA1C-ի ցածր մակարդակը կապում էին ծանր հիպոգլիկեմիայի էպիզոդների քանակի աճի հետ [7, 8]: Բայց վերջին դիտարկումային հետազոտությունները վկայում են, որ ներկայումս՝ պոմպերի և ամենօրյա բազմակի ներարկումների դարում, երիտասարդների շրջանում այլևս այդպիսի նշանակալի ռիսկ չկա ինչպես անցյալում [20-23]: Ծանր հիպոգլիկեմիաները տիպ 1 շաքարային դիաբետով երիտասարդների շրջանում հիվանդացության և պատահական մահացության նշանակալի պատճառ են հանդիսանում: Եվրոպական Բարդությունների առաջահայաց հետազոտությունը (EURODIAB) շուրջ 2764 տիպ 1 շաքարային դիաբետով 15-60 տարեկան եվրոպացիների շրջանում գնահատել է HbA1C-ի հարաբերությունը 7 տարիների ընթացքում ցանկացած պատճառով մահացության հետ: Մահացության ռիսկը բարձր էր թե՛ բարձր, թե՛ ցածր HbA1C-ի պայմաններում: HbA1C-ի 7-8% (53 և 63,9 մմոլ/լ)-ի դեպքում նկատվում էր ամենացածր մահացության ռիսկը՝ անկախ պատճառից [28]: Քանի դեռ տիպ 1 շաքարային դիաբետով պացիենտների շրջանում 'նորմալ' HbA1C-ի ցուցանիշների պարագայում մահացության ռիսկերի պատճառները ամբողջությամբ պարզաբանված չեն, HbA1C-ի մակարդակը ցածր 6,5%-ից կարող է ընդունելի չլինել տվյալ կոնտինգենտի համար:

Հետազոտությունների մեծ մասը (բայց ոչ բոլորը) ցույց են տվել, որ կրկնվող հիպոգլիկեմիկ ցնցումները փոքր երեխաների մոտ կարող են պատճառ դառնալ ԿՆՀ-ի կայուն փոփոխությունների՝ ներառելով սպիտակ նյութի միկրոստրուկտուրան և/կամ հանգեցնել կոգնիտիվ դիսֆունկցիայի [29-36]: DCCT-ի մասնակիցների երկարաժամկետ հսկողության արդյունքները չեն վկայում հիպոգլիկեմիայի հետ կապված նեյրոկոգնիտիվ փոփոխությունների առկայության մասին դեռահասների ու երիտասարդ մեծահասակների շրջանում [37]: Մինչդեռ համեմատաբար բարձր HbA1C-ն կապված էր փսիխոմոտոր և մտածողության էֆեկտիվության թեթև անկման հետ [38]: 9-17 տարեկան երեխաների շրջանում իրականացված եռամյա երկայնական հետազոտությունը ցույց է տվել, որ բարձր HbA1C-ն բերում է տեսողական, բայց ոչ վերբալ հիշողության վատացման, մինչդեռ ծանր հիպոգլիկեմիան չի ազդում տեսողական ու վերբալ հիշողության վրա [39]:

Ստացված տվյալները ենթադրում են, որ ծանր հիպոգլիկեմիայի ու խրոնիկ հիպերգլիկեմիայի ազդեցությունը երկարաժամկետ նեյրոփսիխոմոտոր գործունեության վրա կարող է լինել տարիք կախյալ [37, 40, 41]: Անկախ հիպոգլիկեմիայի մնացորդային երևույթների առկայությունից հիպոգլիկեմիայի հանդեպ վախը հանգեցնում է ինսուլինի դոզաների կանխամտածված նվազեցման, որը իր հերթին հանգեցնում է գլյուկոզայի և HbA1C-ի ցուցանիշների բարձրացման [42]:

Հաստատված է, որ խրոնիկական հիպերգլիկեմիան (մասնավորապես երիտասարդ տղաների մոտ) կապված է ավելի վատ նեյրոկոգնիտիվ արդյունքների հետ [43]: Սուր հիպերգլիկեմիան (>15մմոլ/լ) ասոցացվում է նվազած մոտոր-կոգնիտիվ ֆունկցիայի հետ տիպ 1 շաքարային դիաբետով մեծահասակների շրջանում [44], հաստատելով երեխաների շրջանում հետազոտությունների տվյալները, որոնք վկայում են արյան 20մմոլ/լ -ից բարձր գլիկեմիայի դեպքում մոտոր-կոգնիտիվ ֆունկցիայի նվազման մասին, համեմատած գլյուկոզայի 5-10մմոլ/լ-ի հետ [45]: Ընտանիքի անդամները նշում են հիպերգլիկեմիայի (15-18մմոլ/լ) ազդեցություն տրամադրության և կորդինացիայի վրա [46]: Երկարաժամկետ հետազոտություններ հիպերգլիկեմիայի ու կոգնիտիվ ֆունկցիայի վերաբերյալ հասանելի չեն: Առկա ապացույցները վերանայվել են [47, 48]:

Գլխուղեղի վիզուալիզացնող հետազոտությունները վկայում են, որ ինչպես հիպերգլիկեմիան այնպես էլ հիպոգլիկեմիան հանգեցնում են զարգացող ուղեղի սպիտակ ու գորշ նյութերի փոփոխությունների [49]: Կան տվյալներ դիաբետ ունեցող երեխաների ԿՆՀ-ի փոփոխությունների մասին կապված հիպերգլիկեմիայի և հիպոգլիկեմիայի հետ, չնայած դիաբետ ունեցող երեխաների ճանաչողական ֆունկցիաների և գլխուղեղի վիզուալիզացնող հետազոտությունների արդյունքում ստացված տվյալները ընդհանուր առմամբ չեն տարբերվում առողջ երեխաների տվյալներից [49, 50]: Հիպերգլիկեմիայի հետ կապված ԿՆՀ-ի փոփոխությունները համեմատաբար նոր հայտնագործություններ են [9, 40, 47, 51, 52], բայց համահունչ են ներկայացված նեյրոկոգնիտիվ տվյալների հետ [43]: Կա տեսություն, որ խրոնիկ հիպերգլիկեմիան մինչև 5 տարեկան հասակը, երբ ուղեղը դեռ զարգանում է,

բացասաբար է ացդում սպիտակ նյութի վրա՝ հանգեցնելով դիսֆունկցիայի ոչ պատշաճ միելինիզացիայի պատճառով: Սա ուղեղը դարձնում է ավելի խոցելի ամեն հաջորդ վնասվածքի համար՝ ներառյալ ավելի ուշ, կյանքի ընթացքում հիպոգլիկեմիաների [53]: Կան նաև տվյալներ, որ արյան գլյուկոզայի տատանումները ավելի վնասակար են քան կայուն հիպոգլիկեմիան կամ հիպերգլիկեմիան [54]:

Ներկայումս բոլոր երեխաների գլիկեմիկ կոնտրոլը բարելավելու ամենաապահով խորհուրդը այնպիսի ցածր HbA1C-ի մակարդակի նվաճումն է, որը զերծ կպահի հաշմանդամության հանգեցնող և ծանր հիպոգլիկեմիաներից՝ միևնույն ժամանակ խուսափելով երկարատև նշանակալի հիպերգլիկեմիայից [44-46] և դիաբետիկ կետոացիդոզի էպիզոդներից: Այս նպատակով հարկավոր է հաճախակի գլյուկոզայի մոնիտորինգ՝ պահպանելով կյանքի ընդունելի որակ:

Արյան գլյուկոզայի ինքնահսկում (ԱԳԻ)

- օգնում է վերահսկել արյան գլյուկոզայի ցուցանիշները տվյալ պահին և օրվա կտրվածքով
- օգնում է որոշել ինսուլինի բոլորսային ու բազալ պահանջարկը տվյալ պահին և օրվա կտրվածքով
- օգնում է կատարել ինսուլինի դեղաչափերի շտկումներ՝ փոքրացնելու համար գլիկեմիայի տատանումները
- հայտնաբերում է հիպոգլիկեմիան և օգնում կարգավորել այն
- օգնում է ապահով շտկել հիպերգլիկեմիան:

ԱԳԻ-ն հաճախությունը կորելացվում է տիպ 1 դիաբետով հիվանդների HbA1C-ի մակարդակի բարելավման հետ [55-62]: Ենթադրյալ պատճառներն են՝ ընդունվող սննդի համար նախատեսված ինսուլինի ավելի ճիշտ հաշվարկը և նորմայից բարձր գլյուկոզայի ցուցանիշների արագ շտկման հնարավորությունը: Բացի դրանից մինչ կլինիկական նշանների ի հայտ գալը գլյուկոզայի ցածր մակարդակի վաղ հայտնաբերումը թույլ է տալիս խուսափել հիպերկորեկցիայից՝ նվազեցնելով

հետագա հիպերգլիկեմիայի ռիսկը: ԱԳԻ-ն օգտագործումը ֆիզիկական ակտիվության ժամանակ հնարավորություն է տալիս ճիշտ կարգավորել ինսուլինի ներմուծումը և խուսափել հիպոգլիկեմիայի էպիզոդներից ֆիզիկական ակտիվության ընթացքում և հետո [63]: ԱԳԻ-ը խթանման համար հիվանդին կարելի է առաջարկել թեստավորման իրականացման ալտերնատիվ տեղամասեր՝ կատարել ինչպես մատների ծայրից, այնպես էլ ձեռքի ափից կամ նախաբազկից: Քաղցած ժամանակ նախաբազկից և մատների ծայրերից վերցված արյան գլյուկոզայի ցուցանիշները նույնն են [64]: Այս ալտերնատիվ հատվածներում արյան գլյուկոզայի իջեցումը կարող է ավելի ուշ ի հայտ գալ, այդ իսկ պատճառով, եթե կա հիպոգլիկեմիայի կասկած, ապա նախընտրելի է ստուգել մատների ծայրերից: Եթե ալտերնատիվ հատվածներից վերցված արյան մեջ գլյուկոզան ցածր է, նույնպես ցուցված է ստուգել մատների ծայրերից [65]:

Սարքավորումներ

Կան բազմաթիվ ԱԳԻ-ն գերազանց մոնիտորներ, սակայն նշանակալի անճշտություններ կարող են դիտվել չափման սխալ իրականացման արդյունքում [66]: Բուժաշխատողները պետք է ընտրեն և խորհուրդ տան փորձված, դիմացկուն ու ճշգրիտ տեսակները, որոնք նաև հասանելի կլինեն հիվանդի համար: Երբեմն ցածր արժեքի պատճառով խորհուրդ են տրվում ցածրորակ սարքավորումներ, որոնք անվտանգ չեն հիվանդի համար: Արդյունաբերական բարձր ստանդարտները՝ ներառելով հստակություն, ճշգրտություն և ներբեռնելու ու տվյալները վերլուծելու ունակություն, պետք է հսկվեն կարգավորող գործակալությունների կողմից: Արդյունաբերական նոր ստանդարտները պահանջում են, որ ստացված տվյալների 95%-ը լինեն ստուգիչ տվյալի $\pm 15\%$ -ի սահմաններում:

ԱԳԻ-ի ժամանակացույց

Արյան մեջ գլյուկոզայի չափման լավագույն ժամանակն է՝

- քնելուց առաջ, գիշերվա ընթացքում և գիշերային քաղցից հետո, որպեսզի արագ հայտնաբերել և կանխել գիշերային հիպերգլիկեմիան ու հիպոգլիկեմիան, ինչպես նաև կարգավորել բազալ ինսուլինը

- օրվա ընթացքում մինչև սնունդ ընդունելը ու դրանից 2 ժամ հետո: Որպեսզի որոշել սննդի համար նախատեսված ինսուլինի դոզաները և գնահատել արյան գլյուկոզայի մակարդակը ի պատասխան ինսուլինի ազդեցության պրոֆիլներին (ինսուլինի ազդեցության ակնկալվող պիկերին և ընթացքին)
- ինտենսիվ ֆիզիկական ծանրաբեռնվածությունից առաջ, ընթացքում և ժամեր անց, որպեսզի դեղաչափերի փոփոխություն կատարվի [62, 67, 68]:
- մինչև ավտոմեքենա վարելը կամ այլ տեսակի մեքենա կառավարելը
- հիպոգլիկեմիայի հաստատման և շտկման հսկողության համար
- ուղեկցող հիվանդությունների ժամանակ՝ հիպերգլիկեմիկ կրիզները կանխելու նպատակով:

ԱԳԻ-ն քանակն ու կանոնավորությունը անհատական է՝ կախված.

- սարքի հասանելիությունից
- ինսուլինոթերապիայի ռեժիմից
- երեխայի հիպոգլիկեմիան զգալու ունակությունից
- ԱԳԻ-ն արժեքից սահմանափակ ռեսուրսների դեպքում

Նշում. Ինսուլինի ամենօրյա բազմակի ներարկումների կամ ինսուլինի շարունակական ինֆուզիայի միջոցով դիաբետի ինտենսիվ կառավարման դեպքում կարիք է առաջանում գլիկեմիայի հաճախակի որոշման (4-6 անգամ օրը) և արդյունքների կանոնավոր, հաճախակի մեկնաբանման՝ օրինաչափությունների հայտնաբերման և բուժման պլանի մեջ անհրաժեշտ փոփոխություններ մտցնելու համար: Մասնագետի մեկնաբանումից զատ սա ներառում է հիվանդի և նրա ընտանիքի կողմից մեկնաբանումը:

Նպատակային ցուցանիշները

Նպատակները հատկացված են ուղեցույցի ձևով (աղուսյակ 1): Տարիք-կախյալ գլյուկոզայի նպատակային ցուցանիշների վերաբերյալ սահմանափակ գիտական փաստարկներ կան: Յուրաքանչյուր երեխայի համար պետք է սահմանվեն անհատական նպատակային ցուցանիշներ, որոնք ուղղված կլինեն հնարավորինս

նորմայի հասցնել գյուկոզայի մակարդակը՝ խուսափելով ծանր հիպոգլիկեմիայից, ինչպես նաև հաճախակի թեթև և միջին ծանրության հիպոգլիկեմիաներից: Անհրաժեշտ է ձգտել գյուկոզայի ցուցանիշների առնվազն 50% պահպանել նորմայի սահմաններում (օրինակ 3,9-10մմոլ/լ), <10% նորմայից ցածր՝ բացառությամբ մասնակի ռեմիսիայի փուլում գտնվող հիվանդների:

Գյուկոզայի շարունակական մոնիտորինգ (ԳՇՄ)

Ներկայումս կան մինիմալ միջամտական սարքավորումներ, որոնք չափում են գյուկոզան ենթամաշկային ճարպաբջջանքում յուրաքանչյուր 1-5 րոպեն մեկ անգամ իրականացնելով շարունակական մոնիտորինգ: ԳՇՄ-ն կարող է հատկապես օգտակար լինել նրանց համար ովքեր զգայուն չեն հիպոգլիկեմիայի նկատմամբ. այս սարքը ազդանշան է տալիս գյուկոզայի նշված մակարդակից իջնելու, կամ գյուկոզայի շատ արագ իջնելու դեպքում [69-74]: Բոլոր սարքերը ունեն որոշակի ցուցանիշներ սահմանելու հնարավորություն, ինչի արդյունքում սարքը կանխատեսվող իջեցումից կամ բարձրացումից 10-30 րոպե առաջ ազդանշան է տալիս կրողին՝ հիմնվելով ենթամաշկային ճարպաբջջանքում գյուկոզայի մակարդակի փոփոխության վրա [75]: Սարքը հայտնաբերում է ինչպես կայուն հիպերգլիկեմիայի, այնպես էլ հիպոգլիկեմիայի ռիսկի մեծացման ժամերը, որը նշանակալիորեն ավելի բարդ է արյան գյուկոզայի ինքնահսկում (ԱԳԻ) իրականացնող պացիենտների համար: Սենսորի նույնիսկ կարճատև օգտագործումը բերում է գյուկոզայի միջին ցուցանիշների իջեցման և հիպոգլիկեմիայի էպիզոդների տևողության կրճատման [76, 77]:

"Իրական ժամանակում" ԳՇՄ-ի տվյալների հասանելիությունը հիվանդին կամ մեծահասակ խնամակալին և արյան գյուկոզայի անհապաղ կորրեկցիան ավելի արդյունավետ են գլիկեմիկ կոնտրոլի բարելավման համար քան սարքի կողմից տվյալների "կոյր" հավաքագրումը և ավելի ուշ բժշկի կողմից վերլուծությունը [78]:

Այժմ խորհուրդ է տրվում հաստատել ԳՇՄ-ի ցուցանիշները ստանդարտ ԱԳԻ-ն միջոցով ինսուլինի դոզաների "իրական ժամանակում" փոփոխություններ

կատարելիս՝ առնվազն ԳՇՄ-ն օգտագործելու սկզբում: Այնուամենայնիվ տվյալների պարբերական ներբեռնումները թույլ են տալիս հիվանդին և բժշկին վերլուծել ավելի շատ տվյալներ և կատարել ավելի ճշգրիտ շտկումներ: ԳՇՄ-ի արդյունքների քննարկումը շատ օգտակար ուսուցողական միջոց է գյուկոզայի ցուցանիշների վրա սննդի, ինսուլինի ներարկման ժամերի և ֆիզիկական ակտիվության ազդեցությունը հիվանդին ցույց տալու համար: Տվյալների պարբերական կամ հետաձգված վերլուծությունը օգտակար է հիվանդների հատուկ խմբերում դիաբետի ախտորոշման և կարգավորման համար ինչպիսիք են՝ նախա- տիպ 1 դիաբետը [79], մոնոգեն դիաբետը [80] կամ կիստոզ-ֆիբրոզով պայմանավորված դիաբետը [81, 82]: ԳՇՄ-ի գիտական հետազոտություններից ստացված տվյալները նպաստել են ինսուլինոթերապիայի հետ կապված խորհուրդների բարելավմանը բոլոր դիաբետով անհատների համար [83-86]՝ ներառյալ նրանց, ովքեր չեն օգտագործում ԳՇՄ սարք:

Այժմ ԳՇՄ-ի օգտագործման ներկայիս սահմանափակումներն են տնտեսական ու վարքագծային արգելքները և որոշ սարքերի անճշտությունը, ինչը հիվանդին կարող է հետ պահել հիվանդին սարքի ամենօրյա օգտագործումից:

Ներկայումս, մինչդեռ այս սարքերի օգտագործումը հաստատված է երեխաների օգտագործման համար, նրանք բավականին թանկարժեք են և անհասանելի շատ երկրներում: Ապահովագրական փոխհատուցումը նույնպես սահմանափակ է՝ բացի ԱՄՆ-ից: Ժամանակի ընթացքում այս սարքերը հավանաբար կդառնան ավելի հասանելի, արդյունավետությունը ավելի մեծ գիտական վկայություն կունենա և այս հետազոտությունը կփոխհատուցվի ինչպես մասնավոր, այնպես էլ պետական ապահովագրությունով: Չնայած որ ԳՇՄ-ի օգտագործումը արդյունավետ է թե ամենօրյա բազմակի ներարկումների, թե ինսուլինային պոմպերի օգտագործման դեպքում, վերջինի հետ համակցումը ավելի նախընտրելի է [87]: ԳՇՄ-ի երկարատև օգտագործման (6 ամիս) հետազոտությունները ցույց են տվել, որ չնայած HbA1C-ի նշանակալի իջեցմանը, երեխաները ու դեռահասները հրաժարվում են հաճախակի կրել սարքը, կամ կրել բավականաչափ երկարատև գյուկոզայի մետաբոլիզմի կայուն կարգավորման համար [88]: Զարմանալի չէ, որ սենսորի օգտագործման

հաճախականությունը կանխատեսում է սենսորի HbA1C-ն իջեցնող էֆֆեկտը [89, 90]: Այս արդյունքները հուշում են, որ անհրաժեշտ է դեռահասին ավելի քիչ անհանգստություն պատճառող սարքավորում ստեղծել և գտնել միջոցներ, որոնք կօգնեն դեռահասներին հարմարվել առողջությանը հետևելու առաջադրանքներին: Ոչ բավարար ճշգրիտ սարքի օգտագործումը կարող է հանգեցնել հիվանդի կողմից երկարատև օգտագործման հրաժարման, ինչը հավանաբար կփոխվի սենսորների ճշգրտության արագընթաց բարելավման և պացիենտի վերաուսուցման արդյունքում [91]: ԳՇՄ-ի ավելի լայնածավալ օգտագործումը թույլ կտա անվտանգ հասնել արյան գլյուկոզայի նպատակային ցածր ցուցանիշների՝ բարելավելով դիաբետով հիվանդ երեխաների հեռանկարները [70, 72, 92]:

Ինսուլինի շարունակական ենթամաշկային ինֆուզիայի (ԻՇԵԻ) և ԳՇՄ-ի տեխնոլոգիական զարգացումները բերել են այնպիսի պոմպերի ստեղծմանը, որոնք կարգավորում են ինսուլինի ներմուծումը շրջանառվող արյան գլյուկոզայից մակարդակի ելնելով, օգտագործելով համակարգչային ալգորիթմները (արհեստական ենթաստամոքսային գեղձ): Այսպիսի սարքերը նվազեցնում են ծանր ու միջին ծանրության հիպոգլիկեմիաների ռիսկը՝ հատկապես գիշերային ժամերին [20, 93-95] և խոստումնալից են խնամքի անհրաժեշտության նվազեցման և գլիկեմիկ կոնտրոլի բարելավման տեսանկյունից [96]:

Կետոնային մարմինների որոշումը արյան մեջ և մեզում

- Կետոնային մարմինները արյամ մեջ և մեզում պետք է որոշել, երբ առկա է չկարգավորվող հիպերգլիկեմիա, ինսուլինի անբավարարություն, ուղեկցող հիվանդություններ (վատառողջ օրերին) և սպառնացող կետոացիդոզի ժամանակ.
- հատկապես եթե առկա են որովայնացավեր, փսխումներ, քնկոտություն, հաճախաշնչություն:
- Երբ արյան գլյուկոզայի մակարդակը կայուն բարձր է 14մմոլ/լ-ից
- Պարզվել է, որ արյան մեջ β-հիդրոքսիբուրատի(β-OHB) որոշումը ավելի էֆեկտիվ է, քան մեզում կետոնների որոշումը՝ նվազեցնելով հիվանդանոց

այցելությունները, հոսպիտալիզացիան, կետոացիդոզի վերացման համար անհրաժեշտ ժամանակը [97-99]:

- β -OHB-ի որոշումը հատկապես ցուցված է կատարել, եթե մեզը դժվար է վերցնել, փոքր հասակի երեխաների, ինսուլինային պոմպ կրողների (ովքեր չունեն երկարատև ազդեցության ինսուլինի դեպո) և նախկինում դիաբետիկ կետոացիդոզի էպիզոդներ ունեցող հիվանդների դեպքում [100]:

Մազանոթային արյունից ստացված β -OHB-ի արդյունքների և մեզում կետոնների արդյունքների միջև գործում է հետևյալ կորելյացիան [101].

- 0.1-0.9մմոլ/լ արյան β -OHB-ն համապատասխանում է + կամ “փոքր քանակի” մեզի կետոններին:
- 0.2-1.8մմոլ/լ արյան β -OHB-ն համապատասխանում է ++ կամ “միջին քանակի” մեզի կետոններին:
- 1.4-5.2մմոլ/լ արյան β -OHB-ն համապատասխանում է +++ կամ “մեծ քանակի” մեզի կետոններին:

Կետոնային մարմինների որոշման սարքավորումներ

- Մեզում կետոնների որոշման համար կան ստրիպներ, որոնք հայտնաբերում են մեզում ացետոացետատի քանակի բարձրացումը (նշում.արյան գլխավոր կետոնն է համարվում β -OHB և ոչ թե ացետոացետատը):

Մեզում կետոնային մարմինների թեստավորման արդյունքների մեկնաբանումը

Մեզում միջին կամ մեծ քանակությամբ կետոնների առկայությունը հիպերգլիկեմիայի պայմաններում վկայում են ինսուլինի անբավարարության և կետոացիդոզի հանգեցնող մետաբոլիկ դեկոմպենսացիայի ռիսկի մասին: Փսխումները և դժվարաշնչությունը հիպերգլիկեմիայի և մեզում մեծ քանակությամբ կետոնների առկայության պայմաններում ամենայն հավանականությամբ հետևանք է համակարգային ացիդոզի և պահանջում է հետագա գնահատում: Մեզում

կետոնների որոշումը ավելի քիչ սպեցիֆիկ է դիաբետիկ կետոացիդոզի բացառման կամ ախտորոշման համար, քան β -OHB-ի որոշումը արյան մեջ:

Արյան կետոնների որոշման սարքավորումներ

- Կան սարքեր, որոնք որոշում են արյան β -OHB մակարդակը, ինչպես նաև մազանոթային արյան գլյուկոզայի մակարդակը՝ օգտագործելով երկու տարբեր ստրիպներ:
- Արյան β -OHB-ի որոշումը կարող է կողմնորոշիչ լինել, օրինակ՝ արդյոք անվտանգ է շարունակել օրալ ռեհիդրատացիոն թերապիան թե ավելի ինտենսիվ միջամտություն է անհրաժեշտ ծանր կետոացիդոզը կանխելու համար [98, 100]: Երակային արյան pH-ը և արյան մեջ կետոնների մակարդակը սերտորեն կորելացվում են [98]:

Արյան β -OHB-ի թեստավորման արդյունքների մեկնաբանում

- <0.6 մմոլ/լ նորմալ է և գործողություններ չի պահանջում
- $0.6-1.5$ մմոլ/լ չնչին բարձրացած է, սակայն հիմնականում դրական արդյունք է դիտվում ածխաջուր պարունակող օրալ հեղուկների օգտագործման դեպքում, եթե արյան գլյուկոզան <10 մմոլ/լ: Եթե գլյուկոզան >10 մմոլ/լ անհրաժեշտ է կատարել արագ ազդող ինսուլինի լրացուցիչ ենթամաշկային ներարկում:
- $1.5-3$ մմոլ/լ պարագայում կետոացիդոզի ռիսկը բարձր է, սակայն իրավիճակը հաճախ կարող է կարգավորվել օրալ հեղուկներով և արագ ազդող ինսուլինի ենթամաշկային ներարկումներով: Այս դեպքում անհրաժեշտ է բժշկական խորհրդատվության:
- >3 մմոլ/լ հաճախ ուղեկցվում է ացիդոզով: Հարկավոր է անհապաղ դիմել բժշկական օգնության:

Մինչ կետոնուրիայով ու կետոզով հիվանդներին ինսուլին ներարկելը անհրաժեշտ է չափել արյան գլյուկոզայի մակարդակը: Դիաբետով հիվանդների մոտ կետոնային

մարմինները արյան մեջ և մեզում կարող են բարձրանալ որպես ֆիզիոլոգիական մետաբոլիկ պատասխան քաղցին, ցածր ածխաջրատային դիետային (օր. Աթլինսի դիետա), երկարատև ֆիզիկական ծանրաբեռնվածությանը, ինչպես նաև հղիության, գաստրոէնտերիտի և ալկոհոլային ինտոքսիկացիայի ժամանակ: Այս իրավիճակներում արյան գլյուկոզայի մակարդակը նորմալ կամ ցածր է և լրացուցիչ ինսուլինի նշանակում ցուցված չէ: Մետաբոլիկ “քաղցի” շտկման համար պետք է օգտագործել օրալ գլյուկոզայի ցածր պարունակությամբ էլէկտրոլիտային լուծույթներ, երբ արյան գլյուկոզան 8,5- 14,0 մմոլ/լ է: Երբ արյան գլյուկոզան <8,5 մմոլ/լ պետք է օգտագործել ածխաջրերի ավելի մեծ պարունակությամբ լուծույթներ: Այնուամենայնիվ, եթե β -OHB>1.0մմոլ/լ հարկավոր է հավելյալ ինսուլին, հավելյալ ածխաջրերի օգտագործումից հետո:

Գլիկեմիայի գրառումների պահպանում

- ինքնահսկման օրագրի, մատյանի, աղյուսակի, սմարթ գլյուկոմետրի կամ ծրագրի օգտագործումը տարածված պրակտիկա է գլիկեմիայի տվյալների գրանցման, հսկողության և թերապիայի շտկման համար: ԱԳ-ի և ինսուլինի դոզաների մասին ինֆորմացիան պետք է կանոնավոր կերպով վերանայվի հիվանդների, ընտանիքի անդամների կողմից:
- գրանցումների գրքույկը կամ էլէկտրոնային սարքից ստացված տվյալները օգտակար են խորհրդատվության ժամանակ և պետք է պարունակեն հետևյալ տվյալները.
 - ԱԳ չափումները և ժամերը
 - ինսուլինի դեղաչափերը և ներարկման ժամերը
 - հատուկ առիթների նշումներ, որոնք կարող են ազդել գլիկեմիկ կոնտրոլի վրա (հիվանդություն, խնջույք, վարժություն, դաշտան)
 - ածխաջրերի ընդունման քանակը և ժամերը
 - հիպոգլիկեմիկ էպիզոդներ, ծանրության նկարագրում, սովորական ռեժիմի պոտենցիալ փոփոխությունների գրառում պատճառը գտնելու համար
 - կետոնուրիայի, կետոնեմիայի էպիզոդները:

- Մոնիտորինգի տվյալները չպետք է օգտագործվեն քննադատության համար, այլ որպես գլխկեմիայի տատանումների պատճառները պարզելու միջոց և գլխկեմիկ կոնտրոլը բարելավելու մարտավարություն:
- Դիաբետի հաջողված ինտենսիվ կառավարման համար անհրաժեշտ է հիվանդների ու նրանց խնամակալների կողմից մոնիտորինգի տվյալների հաճախակի վերլուծությունը՝ գլխկեմիայի տատանումների օրինաչափությունների հայտնաբերման և շտկման համար:
- Որոշ դեպքերում, հատկապես դեռահասների շրջանում, ինքնահսկման տվյալների գրանցումը դժվարություն է ներկայացնում: Եթե տան անդամները օգտվում են համակարգչից և կարող են ներբեռնել ԱԳ մոնիտորինգի տվյալները համակարգչի մեջ ուսումնասիրելու համար, ապա դա կարող է փոխարինել ինքնահսկման օրագրին թեև կառավարման մանրամասները անհասանելի են այս մեթոդի դեպքում:

Գլխկոզիլացված հեմոգլոբին

- Գլյուկոզան անդարձելիորեն կապնվում է հեմոգլոբինի մոլեկուլի հետ շրջանառվող էրիթրոցիտների կյանքի ընթացքում (մոտավորապես 120օր)՝ ձևավորելով գլխկոզիլացված հեմոգլոբին (HbA1 կամ HbA1C):
- HbA1C արտացոլում է վերջին 4-12 շաբաթների ընթացքում ԱԳ-ի մակարդակը՝ առավելապես արտացոլելով վերջին 4 շաբաթների գլխկեմիան: Այնուամենայնիվ վերջին շաբաթը ընդգրկված չէ, քանի որ վերջին շաբաթվա գլխկոզիլացումը դարձելի է [102]: HbA1C-ի մոնիտորինգը համարվում է մետաբոլիկ կոնտրոլի գնահատման ամենաօգտակար մեթոդը և միակ չափումն է, որի համար բավարար տվյալներ են առկա ուշ միկրո- և մակրովասկուլյար բարդությունների հետ հարաբերության հետ կապված:

HbA1C-ի որոշումը արմատական հեղաշրջում իրականացրեց դիաբետի կառավարման մեջ և ապահովեց գլխկեմիայի օբյեկտիվ, երկարաժամկետ տվյալներ: Ակնհայտ կապ կա ԱԳ-ի ու HbA1C-ի միջև [103]: Սակայն կան

անհամապատասխանություններ HbA1C-ի ու միջին ԱԳ-ի տվյալների հարաբերակցության միջև [104]: HbA1C-ի քննության ստանդարտացումը և HbA1C-ի ու միջին ԱԳ-ի հարաբերակցության մասին ավելի լավ պատկերացումը դիաբետի հսկողության բարելավման հաջորդ քայլերն են [105, 106]: Կլինիկական Քիմիայի Միջազգային ֆեդերացիան (IFCC) մշակել է նոր ռեֆերենսային մեթոդ, որը ճշգրիտ չափում է միայն HbA1C-ն [107, 108]: Ռեֆերենսային մեթոդով չափվում է β N1-դեօքսիֆրուկտոզիլիեմոգլոբինը և առաջարկված չափման միավորն է մմոլ/մոլ [108, 109]: IFCC/ADA(American Diabetes Assosiation)/EASD(European Assosiation for the Study of Diabetes)/IDF(International Diabetes Federation) ստանդարտացման պրոցեսին վերաբերող համաձայնագիր են թողարկել [110]: DCCT/NGSP-ի (National Glycohemoglobin Standartization Program) % միավորների IFCC/SI մմոլ/լ միավորների վերածման համար կա հաշվիչ, որը հասանելի է <http://www.ngsp.org/convert1.asp>

Սարքավորումները ու միջոցները

- Հարկավոր է իմանալ դիաբետով ոչ հիվանդ երեխաների նորմատիվային ցուցանիշները
- Նախընտրելի է օգտագործել HbA1c մազանոթային արյան մեջ որոշման մեթոդը, որպեսզի արդյունքը հասանելի լինի բժշկին այցի ժամանակ, ինչի հիման վրա անմիջապես փոփոխություններ կմտցվեն բուժման մեջ: Գլիկոզիլացված հեմոգլոբինի որոշման արագ մեթոդի արդյունքները համեմատելի են քրոմատոգրաֆիկ մեթոդի արդյունքների հետ [111]:
- Բոլոր այն կենտրոնները, որոնք սպասարկում են դիաբետով հիվանդ երիտասարդների պետք է ապահովված լինեն HbA1c-ն որոշելու սարքավորումներով: Չափման հաճախությունը կախված է լոկալ պայմաններից ու միջոցներից:
- Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա HbA1c-ի տարեկան առնվազն 4 չափում:

HbA1C նպատակային ցուցանիշները

Նպատակային ցուցանիշը բոլոր 18 տարեկանից փոքր հիվանդների համար $<7.5\%$ է (58mmol/mol) (տես՝ Հավելված 2): Պետք է նշել, որ Ամերիկյան Դիաբետի Ասոցիացիան (ADA) վերջերս ընդունել է նույն մակարդակը [112]՝ ընդունելով, որ մանկական պոպուլյացիայում տարիք-կախյալ A1C-ի մակարդակի վերաբերյալ գիտական վկայությունները սահմանափակ են: Այս մակարդակը նախատեսված է որպես ոգեշնչող նպատակային ցուցանիշ, քանզի երեխաների և դեռահասների ճնշող մեծամասնությունը ներկայումս չեն հասնում դրան: Օրինակ՝ ԱՄՆ-ում 13 տարեկանից փոքր երեխաների միայն 27%-ը և 13-19 տարեկանների 23%-ն են հասնում այս նպատակային ցուցանիշին [113]: Մյուս կողմից՝ 2013թ. Շվեդիայում 13 տարեկանից փոքր երեխաների 60%-ը և 13-18 տարեկանների 36%-ը ունեցել են $\text{HbA1C} < 7.5\%$ [114]: Յուրաքանչյուր երեխա պետք է ունենա իր համար անհատական ընտրված նպատակային ցուցանիշ, որը թույլ կտա պահպանել նորմային հնարավորինս մոտ ցուցանիշներ՝ խուսափելով խորը հիպոգլիկեմիաներից և հաճախակի թեթև ու միջին ծանրության հիպոգլիկեմիաներից:

Գլխավոր նպատակն է կանխել դիաբետի երկարաժամկետ միկրովասկուլյար ու մակրովասկուլյար բարդությունների զարգացումը՝ միևնույն ժամանակ խուսափելով ծանր հիպոգլիկեմիայի մնացորդային երևույթներից և ԿՆՀ-ի փոփոխություններից կապված թե՛ հիպերգլիկեմիայի և թե՛ հիպոգլիկեմիայի հետ: DCCT-ի արդյունքները առկա են դեռահասների համար, իսկ խորհուրդները ավելի փոքր երեխաների համար հիմնվում են այս տվյալների և փորձագետների կարծիքների վրա: DCCT-ի ինտենսիվ բուժում ստացած դեռահասների խմբում HbA1c միջին ցուցանիշը եղել է 8.1% (65mmol/mol), մինչդեռ մեծահասակների համապատասխան խմբում HbA1c-ի միջին ցուցանիշը եղել է 7.1% (54 մմոլ/մոլ): Հաջորդող EDIC (Epidemiology of Diabetes Interventions and Complications) դիտարկողական հետազոտության մասնակիցները պահպանել են HbA1c-ի 7,8-8,2% (62–66 մմոլ/մոլ) մակարդակը անկախ DCCT ռանդոմիզացիայից դիտարկման 30 տարիների ընթացքում [19, 115]: Ի հավելումն դրան, ակնկալվում է, որ երեխաների որոշ մասը դիաբետի ախտորոշումից հետո առաջին տարվա ընթացքում պետք է հասնի HbA1c-ի նորմալ ռեֆերենսային

ցուցանիշների (մասնակի ռեմիսիայի շրջանում), հիմանականում ախտորոշումից հետո 1-6 ամիսների ընթացքում:

